



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամլո հաղորդագրություն

Հունիսի 27, 2022


ՔՈԱՖ-ի ամենամյա ամառային ֆոնդիայթայթման երեկոյին հավաքագրվել է 125.000 ԱՄՆ դոլար Արցախում երեխայի և ընտանիքի կենտրոն բացելու համար

Նյու Յորք — ՔՈԱՖ-ի 12-րդ ամենամյա ամառային ֆոնդիայթայթման երեկոյին, որ կայացավ հունիսի 22-ին, Ստեփանակերտում երեխայի և ընտանիքի կենտրոն հիմնելու նպատակով հավաքագրվել է 125.000 ԱՄՆ դոլար: Հատկապես պատերազմից հետո Արցախի հասարակությունը նմանատիպ կենտրոնի կարիքը շատ ունի:

Ավելի վաղ՝ տարվա ընթացքում, բարերարներ Վիկտոր Ծառուկյանն ու Ջուդիթ Սարյանն արդեն նվիրաբերել էին 150.000 ԱՄՆ դոլար այս նույն նախաձեռնության համար, քանի որ Արցախում սոցիալ-հոգեբանական, լոգոպեդական ծառայություններ մատուցող ու նախադպրոցական տարիքի երեխաների կրթությունն ապահովող կենտրոնի կարիքը շատ կա:

Տարիներ շարունակ ՔՈԱՖ-ն ապահովել է հոգեբանական և լոգոպեդական ծառայությունների, սոցիալական աշխատանքի ու երեխաների վաղ կրթության հասանելիությունը Հայաստանի՝ այդ հնարավորություններից զուրկ գյուղերում: 16 տարիների ընթացքում ՔՈԱՖ-ի երեխայի և ընտանիքի ծառայությունները սոցիալական աշխատանքի, հոգեբանական ու լոգոպեդական ծառայություններ է մատուցել, մանկան զարգացման ծրագրեր առաջարկել ավելի քան 20 գյուղերի 6500-ից ավելի երեխաների: 2021թ. Արմավիրի մարզի Հացիկ գյուղում երեխայի և ընտանիքի առաջին կենտրոնի բացմամբ հիմնադրամը մեկ տանիքի տակ կենտրոնացրեց գյուղաբնակների կարիքների բավարարման ու կյանքի որակի բարձրացման համար անհրաժեշտ ռեսուրսները: Հացիկի երեխայի և ընտանիքի կենտրոնն իր բացումից ի վեր ծառայել է շուրջ 150 մարդու: Նմանատիպ կենտրոնի հիմնումն Արցախում պատերազմի հետևանքներից տուժած արցախահայությանը հնարավորություն կտա՝ ստանալու անհրաժեշտ աջակցություն իրենց ավելի լավ ապագան կառուցելու համար:

“Երեխաների կրթությանը և մտավոր զարգացմանը նպաստելով՝ ՔՈԱՖ-ը ձգտում է իր դրական ազդեցությունն ունենալ մի ողջ սերնդի անձնական ու մասնագիտական աճի վրա,- նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը,- և այս տարվա ամառային ֆոնդիայթայթման երեկոյի առատաձեռն նվիրատուների աջակցությամբ կկարողանանք կրկնել Արմավիրի հաջողությունն Արցախում՝ կրթության ու զարգացման հնարավորություններ տալով ավելի քան 250 հոգու»:



CHILDREN
OF ARMENIA
FUND

Այս տարվա ամառային երեկոն համավարակից հետո առաջին ոչ վիրտուալ միջոցառումն է, որին մասնակցեցին շուրջ 225 հյուրեր ԱՄՆ-ից: Միջոցառմանն աջակցեցին նաև ԱՄՆ-ի հայկական բիզնեսներ՝ Tacori զարդերի բրենդը, WearArmenia հագուստի բրենդը, որոնք իրենց վաճառքի հասույթը նվիրաբերեցին ՔՈԱՖ-ին: Միջոցառման հյուրերը նաև վայելեցին Storica գինիներ: Եվ իհարկե, միջոցառման ամենահետաքրքիր մասերից մեկն էլ այն էր, որ հյուրերը հնարավորություն ունեցան հանդիպելու Արտեմի գյուղից ՔՈԱՖ-ի շրջանավարտ 20-ամյա Միլենա Անտոնյանին ու լսելու ՔՈԱՖ-ի հետ անցած նրա ուղու մասին:

Եթե ցանկանում եք աջակցել ՔՈԱՖ-ին Երեխայի և ընտանիքի կենտրոններ հիմնել Հայաստանում ու Արցախում, կարող եք նվիրատվություն կատարել coaf.org կայքում:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Ծիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: